ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՐ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺ Է

Գուգարաց թեմի առաջնորդարանը և Վանաձորի Պետական Մանկավարժական ինստիտուտը հունվարի 19-ին կազմակերպեցին «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի նահատակության տարելիցին նվիրված ոգեկոչման արարողություն:

Այս առթիվ ժամը 11.^{00}-ին Մանկավարժական ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ հիշատակության հանդիսավոր նիստ: «Թուրքիայում 1915 թ. մինչև մեր օրերը հայության վիճակի մասին» զեկուցմամբ հանդես եկավ «Ակօս» թերթի հայաստանյան ներկայացուցիչ Տիրան Լոքմագյոզյանը: Դասախոսներն ու լրագրության բաժնի ուսանողներն իրենց խոսքում ոգեկոչեցին ազատ խոսքի ու արդարության համար նահատակված հայազգի լրագրողի գործունեությունը և մեկ անգամ ևս դատապարտեցին ոճրագործությունը:

Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, ողջունելով ՎՊՄԻ-ի դասախոսներին և ուսանողներին և ընդգծելով մասանավորապես ուսումնական հաստատության կողմից նման կարևոր միջոցառման կազմակերպման կարևորությունը՝ ի մասնավորի ասաց. *«Հրանտ Դինքը որպես Թուրքիայի Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացի, իր հայացքներով ու մեկնաբանություններով առաջինն էր, որ բարձրաձայնեց իր մտքերը հենց Թուրքիայում»:*

Նիստից հետո՝ ժամը 12.^{00}-ին, հարյուրավոր վանաձորցիներ՝ ուսանողներ ու դասախոսներ, մտավորականներ ու արվեստագետներ, մասնակցեցին Մանկավարժական ինստիտուտից դեպի Ս. Աստվածածին եկեղեցի ընթացող խաղաղ երթին՝ ձեռքներին պահած հայոց եռագույնը, Հրանտ Դինքի նկարները և տեղի ունեցած ոճրագործությունը դատապարտող լոզունգներ:

Ժամը 13.00-ին Ս. Աստվածածին եկեղեցու Նահատակաց Պուրակում՝ Մեծ եղեռնի հուշակոթողի առջև, նախագահությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, թեմի հոգևոր դասը կատարեց հոգեհանգստյան պաշտոն Հրանտ Դինքի հոգու հանգստության համար:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ